Հավելված 3
«ՇՄ-ԿՄՍՎՄՄԲ-*22/04*» ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

«Մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ
«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ»
մշակութային միջոցառման» անցկացման
դրամաշնորհային ծրագրի

ԱՌԱՋԱՐԿ

Տիտղոսաթերթ

Ծրագրայինանվանակարգ	Առաջարկվողնախագծի,միջոցառմաննանվանում «Մինասի գույներով» միջազգային 9-րդ պլեների անցկացում Գյումրի քաղաքում
Նախագծիընդհանուրբյուջե 1 899 960 ՀՀ դրամ	ՀՀՇիրակիմարզպետարանիցհայցվողգումար 1 899 960
Նախագծիսկիզբ/ավարտ	22/09/2022-22/11/2022
Կազմակերպությանանունը	Արդինի կրթամշակութային և տուրիզմի զարգացման հիմնադրամ
Հապավումը (եթե առկա է)	Արդինի հիմնադրամ
Ծրագրիանվանումը	«Մինասի գույներով» միջազգային 9-րդ պլեների անցկացում Գյումրի քաղաքում
Ծրագրիսկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	22/09/2022-22/11/2022
Ծրագրիիրականացմանվայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	Շիրակի մարզ, Գյումրի համայնք
Կազմակերպությանղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Երանուհի Սողոյան, 094 45 19 43, ardinifund@gmail.com
Ծրագրիղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Երանուհի Սողոյան, 094 45 19 43, yeranuhi.soghoyan@gmail.com
Կազմակերպությանգործունեությանհասցեն և կոնտակտայինտվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	Ախուրյան համայնք, Գերմանո-հարավսլավական թաղամաս, տուն 50, 094 45 19 43, ardinifund@gmail.com
Ծրագրիբյուջե (ՀՀ դրամ)	1 899 960 ՀՀ դրամ

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը – առավելագույնը 500 բառ:

«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեների ամենամյա անցկացումը Շիրակի մարզում հնարավորություն է ընձեռում ամեն անգամ մոտ 30-40 նկարիչների համախմբվելու մեկ գաղափարի շուրջ: 5-7 օրերի ընթացքում Հայաստանի

տարբեր բնակավայրերից, Արցախից եւ Ջավախքից ժամանած ստեղծագործողներն իրենց կտավներում նկարում են լույսը՝ մինասյան գույներով: Ամենամյա պլեները հնարավորություն է տալիս հանրահռչակելու լույսի նկարչի՝ Մինաս Ավետիսյանի արվեստը, նպաստում գեղանկարիչների միջանձնային շփումներին, փորձի փոխանակմանը, ինչու չէ՝ նաեւ տուրիզմի զարգացմանը: «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ»-ն այս տարի կանցկացվի աշնանը,Գյումրիում: Կհրավիրվեն 30 նկարիչներ Հայաստանի բոլոր մարզերից Արցախից եւ Ջավախքից: Պլեներն այս անգամ կներկայանա սերունդների երկխոսության տեսքով: Հրավիրվելու են թե ուսանող նկարիչներ, թե պրոֆեսիոնալ՝ տարիների փորձառությամբ ու հեղինակությամբ հայտնի նկարիչներ: Սա լավ հնարավորություն է պրոֆեսիոնալների կուտակած փորձը սկսնակներին փոխանցելու: Այս տարի կունենանք աշնանային պլեներ՝ առավել խտացված գունային գամմայով: Մինաս Ավետիսյանի հյութեղ կարմիրն ու դեղինը աշնանային բնապատկերներում արտահայտելու լավագույն հնարավորությունը կընձեռվի պլեների մասնակիցներին: Պլեները տեղի է ունենալու Գյումրիում, հոկտեմբեր ամսին:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքհիմնավորում

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ներկայում Հայաստանում բավական սակավաթիվ այնպիսի միջոցառումները,որոնք մեկ գաղափարի շուրջ համախմբում են տարբեր վայրերից ժամանած արվեստագետների: Հատկապես քիչ են կազմակերպվում մեկից ավելի օրեր տևողությամբ նմանատիպ միջոցառումներ:

Նկարիչներն անհատ ստեղծագործողներ են: Նրանց համախմբող լավագույն միջոցներից մեկը պլեներն է: Եթե թարգմանենք պլեներ բառը ֆրանսերենից, բառացի կնշանակի՝ բացօթյա: Այս տերմինը գեղանկարչության մեջ կարելի է մեկնաբանել, որպես արեւի լույսի եւ օդի ազդեցությամբ պայմանավորված գունային փոփոխությունների ողջ հարստության վերարտադրումը կտավում: Ամեն տարի կազմակերպվող պլեներները հնարավորություն են տալիս գեղանկարիչներին բացահայտել նոր վայրեր, ունենալ նոր ծանոթություններ, միմյանցից սովորելու հնարավորություն: Պլեները նպաստում է միջանձնային, միջմշակութային շփումներին:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպեսնաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

«Արդինի» կրթամշակութային և տուրիզմի զարգացման հիմնադրամը համայնքային զարգացման, բնապահպանական, գյուղատնտեսական, կրթական, մշակութային, սոցիալական, զբոսաշրջային և այլ հանրօգուտ նպատակներ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որ հիմնադրվել է 2019թ.-ին:

Հիմնադրամի նպատակն է կրթության, մշակույթի, բնապահպանության, գյուղատնտեսության, առողջապահության և տուրիզմի ոլորտում առկա նորարական գիտելիքների ուսուցման, նոր մեթոդաբանության ներդրման ու փորձի փոխանակման միջոցով նպաստել համայնքներում առավել գրագետ, նոր մարտահրավերներին պատրաստ, ակտիվ ու նախաձեռնող հասարակության ձևավորմանը:

2022թ-ի օգոստոսի 17-21 ,Ախուրյան խոշորացված համայնքի Ջաջուռ բնակավայրում հիմնադրամն իրականացրել է «Նկարում ենք լույսը» խորագրով երիտասարդ նկարիչների պլեներ, «Նկարիչներն՝ հանուն Ջաջուռի» կարգախոսով: Հիմնադրամը,

պլենները, որպես ձեւաչափ է օգտագործել՝ տեղական, մարզային իշխանությունների ուշադրությունը Ջաջուռի խնդիրների վրա հրավիրելու եւ որոշակի լուծումներ առաջարկելու նպատակով: Ծրագիրն ուներ մի քանի բաղադրիչ՝ սոցիալական, բարեգործական, զբոսաշրջային: Հիմնադրամի եւ ծրագրի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ պլենների ընթացքում ստեղծված տաս կտավը տրամադրվելու էր բարեգործական վաճառքի համար: Գումարը տրամադրվելու է Ջաջուռում համայնքային գրադարան-ընթերցասրահի ստեղծմանը:

Ծրագրի նպատակը և խնդիրները, հանրայնացվող արժեքները՝ գեղարվեստական, սոցիալական, կրթական (առավելագույնը 300 բառ):

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ խնդիրներ են լուծվելու ծրագրի ավարտին, և ինչ արժեքներ են հանրայնացվելու: Բացօթյա միջոցառումների դեպքում ներկայացնել անցկացման վայրի սխեմա և ենթակառուցվածքների վերաբերյալ տեղեկատվություն

«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեների նպատակն է համախմբել Հայաստանում եւ մերձավոր սփյուռքում ապրող գեղանկարիչներին մեկ հարկի տակ՝ հնարավորություն տալով նրանց ստեղծագործելու նոր միջավայրում, հաստատելու նոր ծանոթություններ, իրականացնել փորձի փոխանակում: Ամենամյա պլեներները հնարավորություն են տալիս մեկ անգամ եւս խոսելու մշակութային ամենագունեղ, կախարդական, որոշ դեպքերում՝ անբացատրելի մի ոլորտի մասին, որ կոչվում է գեղանկարչություն:

Ծրագրի խնդիրներ են

-ապահովել արվեստագետների համար շփման և ծանոթությունների բարենպաստ միջավայր

-Գյումրի քաղաքի համար ստեղծել ևս մեկ հնարավորություն ունենալ ոչ շիրակցի ստեղծագործողների գեղանկարներ

-բարձրացնել մարզի զբոսաշրջային գրավչության մակարդակը նկարիչների շրջանում

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն սփորև ներկայացված ձևաչափի .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն **«Արդինի» կրթամշակութային և տուրիզմի զարգացման հիմնադրամը**

Ծրագիր **«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ**

Ժամանակահատված **սեպտեմբերի 22-ից նոյեմբերի 22-ը**

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստական աշխատանքներ՝ մասնակիցների հավաքագրում, տարածքի և այլ տեխնիկական պայմանավորվածությունների ձեռքբերում, օրակարգի վերջնականացում, հրավերների ուղարկում	Ծրագրի ղեկավար, օգնական												
2	Բուն պլենների անցկացման աշխատանքներ ըստ նախապես մշակված օրակարգի	Ծրագրի ղեկավար, պլենների համակարգող												
3	Միջոցառման ամփոփում, հաշվետվությունների կազմում, ներկայացում հանրությանը և	Ծրագրի ղեկավար, օգնական												

	դրամաշնորհի ատուին														

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Կայացած գեղանկարիչներ, ուսանող-նկարիչներ, արվեստաբաններ Հայաստանի բոլոր մարզերից, Ջավախքից և Արցախից, Գյումրու, Հառիճի և Կարմրաքար բնակավայրերի բնակիչներ, արվեստագետներ

Ծրագրի արդյունքները և շարունակականությունը

Որոնք են լինելու ծրագրից իրականացումից ակնկալվող արդյունքները, հեռանկարայնությունը և ազդեցության գնահատման մեխանիզմները:

Ծրագրի արդյունքում նախատեսվում է, որ մասնակից արվեստագետները միմյանց հետ կհաստատեն կապեր, որը հետագայում կնպաստի նոր նմանատիպ միջոցառումների անցկացման ու նոր գաղափարների իրականացման: Անցկացվող վայրերում կստեղծվի միջավայր բնակիչների ու արվեստագետների շփումների, հաղորդակցության, որը կբերի շահառուների շրջանում գեղագիտական ճաշակի բարձրացում ու ավելի դրական մոտեցումներ արվեստի նկատմամբ:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Քանի որ առաջին անգամ պլեներն անցկացվելու է աշնանն, ապա առաջնային ռիսկերի թվում են եղանակային պայմանները: Այդ նպատակով ընտրվել են վայրեր Գյումրիում, որտեղ նկարիչները հնարավորություն կունենան աշխատելու անգամ անձրեւային եղանակին: Գյումրիից դուրս կազմակերպվող բացօթյա աշխատանքներն եւս՝ եղանակով պայմանավորված, կարող են փոփոխվել, այդ թվում եւ նախօրոք ընտրված բնակավայրերը:

Մյուս ռիսկը մասնակիցների շատ կամ քիչ հայտավորվելն է, եւ դրսից արվեստագետների ժամանման հետ կապված դժվարությունները: Սակայն այս ռիսկը նախատեսվում է չեզոքացնել մասնակիցների պահուստային ցուցակից նոր մասնակիցների ընդգրկմամբ:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը և կցել կենսագրականները:

Ծրագիրն անխափան իրականացնելու նպատակով ներգրավվել են ծրագրի օգնական եւ բուն պլեների աշխատանքները համակարգող:

Ծրագրի օգնականը պարտավոր է զբաղվել հիմնադրամի ֆեյսբուքյան էջով, տեղադրել հայտարարություններ, զբաղվել նամակագրությամբ, պատասխանել հայտերին, ճշտել հայտատուների վերաբերյալ տեղեկատվությունը, կազմել ցուցակներ եւ այլ աշխատանքներով:

Պլեների համակարգողի պարտականությունների մեջ է մտնում պլեների մասնակիցների դիմավորումը, տեղավորումը հյուրանոցում, մասնակիցների նախաճաշի, ճաշի, ընթրիքի կազմակերպումը, քաղաքից դուրս մասնակիցների համար տրանսպորտի ապահովումը, օրվա ընթացքում առաջացող կազմակերպչական խնդիրների լուծումը եւ այլ հարցեր:

Հանրահռչակում

Ներկայացնել հանրահռչակման և մարկետինգային գործողությունների պլան. լուսաբանման միջոցներև տարածման հարթակներ, առկայության դեպքում գովազդային նյութեր կամ էսքիզներ:

Ծրագրի վերաբերյալ հանրությանը տեղյակ պահել ԶԼՄ-ների միջոցով, օգտագործել ֆեյսբուկյան տիրույթը եւ ուղիղ եթերների հնարավորությունը:

Համագործակից և համաֆինանսավորող կաղմակերպություններ

Ներկայացնել տեղեկատվություն համագործակից և համաֆինանսավորող կաղմակերպությունների մասին

Նախատեսվում է ծրագրի շրջանակներում համագործակցել Գյումրու քաղաքապետարանի, ինչպես նաև տրանսպորտի, գնումների և հյուրընկալության ոլորտներում գործող մասնավոր ընկերությունների հետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանից նախկինում ստացած դրամաշնորհային աջակցություն

Ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Շիրակի մարզպետրարանից նախկինում ստացած դրամաշնորհային աջակցության վերաբերյալ. նշել ծրագրի անվանումը, տարեթիվը, ֆինանսավորման չափը (կեպը չի վերաբերում նախարարությանը ենթակա կազմակերպություններին):

Նախկինում Շիրակի մարզպետարանից ստացված դրամնաշնորհային աջակցություն չի եղել:

«Արդինի» կրթամշակութային և տուրիզմի զարգացման հիմնադրամի տնօրեն՝ Երանուհի Սողոյան

_____ _____

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Digitally signed by SOGHOYAN YERANUHI 6809720262
Date: 2022.09.11 16:54:37 GMT+04:00